Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025Թ ՄԱՅԻՍԻ 16-27-Ը ԱՎՍՏՐԻԱ (Ք. ՎԻԵՆՆԱ)
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. <u>Անունը, ազգանունը՝</u>

Ժենյա Տեր-Վարդանյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի պետ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2025թ հունիսի 16-27-ը Ավսրիա (ք. Վիեննա)

4. <u>Հրավիրող կողմը.</u>

Սաութերն Կալիֆորնիա Սեյֆթի Ինստիտուտ (Southern California Safety Institute Inc)

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>

Բաժնի գործառույթների կիրառում, այն է՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության կազմակերպումը և պատահարի վայրում առաջնահերթ գործողությունների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1777-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և միջադեպերի մասնագիտական քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 24-ի «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկը հաստատելու մասին» N 06-Լ հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» կիրառում:

6. <u>Քննարկված թեմաները.</u>

Քննարկվել են ավիացիոն պատահարներին առնչվող կանոնակարգերը, ավիացիոն պատահարներ քննող մարմնի պատասխանատվությունները, պարտականությունները

համաձայն ԻԿԱՕ հավելված 13-ի, պատահարի վայրում պատահարի ենթարկված օդանավի, նրա կառուցվածքային մասերի ու բեկորների, օբյեկտիվ վերահսկման օդանավային և վերգետնյա միջոցների, օդանավում գտնվող և դրսից պատահարի մեջ ներքաշված առարկաների ուսումնասիրություն և պահպանության ապահովման վերաբերյալ:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Դասընթացի մասնակցություն, ելույթներ, բազմաթիվ շնորհանդեսների ներկայացում, դասախոսական կազմի և ավիացիոն այլ մասնակիցների հետ քննարկումների մասնակցություն: Դասընթացի ավարտին անցկացվել է քննություն:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Ավիացիոն պատահարի վայրում առաջնային գործողությունների իրականացում:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 24-ի «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկը հաստատելու մասին» N 06-Լ հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» լրամշակում:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

02. 07. 2025թ.